


Հայ

ՀԱՅԱՑ ԼԵԶՎԻ  
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՐՎԱԾՔԸ ՄԱՍՄԱՅՅ-  
ԱԲՆ ԳՊԲՈՑԻ 1-4 ԳԵՍՄԵՐԵՆՆԵՐՈՒՄ  
ՅԵԿ  
ԲԱՐԵԼԱՎԱՄԱՆ ՄԻԶԱՑՆԵՐԸ

(1939/40 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)



Հ Ա Յ Ա Վ Ա Տ Ա Ս

18 MAY 2010

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ԼՈՒԺՈՂԿՈՄԱՏ

491.99(077)

շ-28

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ  
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՐՎԱԾՔԵ ՄԱՍՍԱՅ-  
ԿԱՆ ԳՊԲՈՑԻ 1-4 ԳԱՍՏՐԱՆԵՐՈՒՄ  
ՅԱՐԵՎԱԿՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

(1939.40 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)

ОБЯЗАТЕЛЬНЫЙ  
ЭКЗЕМПЛЯР

ԼՈՒԺՐՈՏ  
ՏԵՐԵՎԱՆ

1940

06 MAY 2013 491.54 (022)

10. 926

18451

БІБЛІОТЕКА  
Академії Наук  
УРСР

34181 кн.



5018-55

Կաղմեց՝ Պ. Պողոսյան

Խելագրեցին՝ Ս. Սողոմոնյան, Վ. Ռոդովյան, Ա. Տիգրանյան  
Տնի խմբագիր՝ Հ. Կարսակեայան  
Երբագրի՝ Վ. Պողոսյան  
Կոնտրոլ պրազրի՝ Մ. Պարոնիկյան  
Հանձնված է արտադրության 1940 թ. սեպտեմբերի 21-ին  
Ստորագրված ե տպագրության 1940 թ. հոկտեմբերի 12-ին  
Վ. Ֆ. 2619, հրատ. № 76, պատկեր № 223, տիրաժ 1500

Հումքատի տպարան, Յերևան, Տեղյան 137

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴՐԱՆՑԲՔ  
1-4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԲԱՐԵԼԱՎ-  
ՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

(1939|40 ուս. ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)

Հայոց լեզվի ուսուցման գծով մեր դպրոցները անցյալի համեմատությամբ վերջին տարիներս զգալի նվաճումներ ունեն:

Կուսակցության և կառավարության մի շարք վորոշումները՝ գպրոցի, ուսուցչի, ուսման աշխատանքի կազմակերպման և առանձին առարկաների գասավանդման մասին, մեր գործոցը հանեցին գժվարություններից և զրին զարգացման լայն ճանապարհի վրա: Այդ պատմական վորոշումներով ջախջախիչ հարված տրվեց գորոց մահացման հակալենինյան տեսությանն ու պրակտիկային, մանկաբանական բուրժուական կեղծ գիտությանն ու նրա կատարած ավելացմանը մեր դպրոցներում, վերականգնվեց մանկավարժությունը վորոց գիտություն, վերականգնվեցին ուսուցչի, վորպես այդ գիտության կրողի և կիրառողի, իրավունքները: Ուսուցիչը դարձավ դպրոցի հիմնական ֆիզուրան:

Ուստի բնական և ու հասկանալի այն մեծ խսնդիրակությունը, վորոց համակված մեր ուսուցչությունն աշխատում և կենսագործել կուսակցության՝ և կառավարության մարտական վորոշումները: Այժմ մեր ուսուցչության շարքերում քիչ չեն այնպիսիները, վորոնց մտածված, բարեխիղճ, համառ, հետևողական ու ստեղծագործ կուսակցության տալիս և լավագույն արդյունք, վորոնցից շատերը իրենց ուսումնադասատիրարակչական աշխատանքում հասել են մանկավարժական վարպետության աստիճանի:

Այսպես, մեր դպրոցների տարրական դասարանների հայոց լեզվի դասաստուններից վորպես առաջավորների կարելի յե հիշատակել ընկերներ՝ Հ. Աղամալյանին, Ն. Մազմանյանին, Ա. Խաչատրյանին, Հ. Պապանյանին, Ա. Վարդիկյանին, Շ. Չիրովիչյանին, Հ. Հակոբյանին, Յե Մուշեղյանին, Փ. Շաքարյանին, Մ. Մինելյանին, Հ. Պողոսյանին, Ա. Սրապյանին և շատ ուրիշների: Այս

ուսուցիչների թվում կան վոչ միայն մանկավարժական աշխատանքի մեծ ստաժ ունեցողներ, այլև համեմատաբար յերիտասարդ ուժեր, զորոնք սիստեմատիկաբար աշխատելով իրենց վրա, քննադատորեն յուրացնելով վարպետ ուսուցիչների փորձը և գիտակցորեն ոգտագործելով իրենց խոր փորձը՝ կարողացել են առաջավորների շարքը դուրս գալ:

Առաջավոր ուսուցիչները զպրոցներում առաջկայական խորհրդակցությունների միջոցով և անհատապես մեծ ոգնություն են ցույց տալիս սկսնակ և քիչ փորձ ունեցող դասասառներին: Շատերը զրանով չեն բավականանում, այլ աշխատում են նաև տպագիր խսորի միջոցով իրենց փորձը մասսայականացնել (Հ. Աղամալյան, Ն. Մագմանյան, Ա. Վարդիկյան, Շ. Զիբուխյան, Հ. Պապանյան և այլն):

Սակայն հայոց լեզվի ուսուցման բնադրվառում դեռևս լիովին չի վերացված մեր զպրոցի «արմատական թերությունը»:

Մեր միջնակարգ զպրոցներում հայոց լեզվի ուսուցումն իր ներկա դրվագքով դեռևս չի տալիս պահանջված արդյունքը: Միջնակարգ զպրոց ավարտողները մեծ մասամբ «միանգամայն գրագետ» մարդիկ չեն, նրանք չեն տիրապետում լեզվի գիտությանը, չեն կարողանում ճիշտ ու զրական լեզվով արտահայտել իրենց մտքերը՝ թե բանավոր և թե գրավոր: Մինչդեռ լեզվի ուսուցումն խսկալես պետք ե ավարտվի 7-րդ դասարանում և այդ դասարանն ավարտող աշակերտներն իրենց լեզվական գիտելիքներով և ուսակություններով պետք ե գերծ լինեն վերը հիշատակած բոլոր թերություններից:

Հասկանալի յե, վոր այս դեպքում համապատասխանորեն պետք ե բարձրանան նաև 1—6-րդ դասարանների աշակերտների լեզվական գիտելիքների և ուսակությունների նկատմամբ յեղած պահանջները:

Առանց այս խնդիրը լուծելու, մեր զպրոցները չեն կարող բավարար լուծել նաև «...միանգամայն գրագետ, գիտությունների հիմունքներին (Փիզիկա, քիմիա, մաթեմատիկա, մայրենի լեզու, աշխարհագրություն և այլն) լավ տիրապետող մարդիկ» և «կոմունիստական հասարակության բազմակողմանի զարգացած անդամներ պատրաստելու» հիմնական խնդիրը (Համ Կ(բ)Կ Կենտկոմի 1931 թ. սեպտեմբերի 5-ի՝ «Տարրական և միջնակարգ զպրոցի մասին» վորոշումից):

Յեթե ճիշտ ե, վոր «լեզուն վոչ միայն մարդկային հաղորդակցության կարևորագույն միջոցն ե, այլև մտածելու միջոց,

միտք կազմակարելու միջոց» (իսկ այդ ճիշտ ե), ապա լեզվի (և համեմապես մայրենի լեզվի) դերը չափազանց մեծանում է: Լեզվուն արդեն հանդես է զալիս վոչ միայն վորպես սոսկ մի առարկա, ի թիվս այլ առարկաների, այլև վորպես բոլոր գիտությունների հիմունքներին տիրապետելով կարենրագույն գործոն: Ահա թե ինչու լեզվի ուսուցումը, լեզվի ուսուցման վորպես բարձրացնելու խնդիրը պետք ե լինի մեր ուշագրության կենտրոնում, դառնայ մեր ամենորյա հսկողության առարկան:

## 1. Հայոց լեզվի ուսուցման խնդիրները 1—4-րդ դասարաններում

Այս գասարաններում հայոց լեզվի ուսուցումը հետազոտում և բավական լուրջ խնդիրներ:

Չորրորդ դասարանն ավարտող աշակերտները հիմնականում պետք ե հաղթահարած լինեն կարդալու տեխնիկայի հետ կաղված դժվարություններով՝ պետք ե կարողանան ճիշտ, սահուն, զիտակցաբար՝ և արտահայտիչ կարդալ մատչելի հողվածներն ու գեղարվեստական գրվածքները, նրանք պետք ե կարողանան պարզ նախադասություններով ճիշտ ու զրական լեզվով արտահայտել իրենց մտքերը՝ բանավոր և գրավոր, պետք ե յուրացրած լինեն ուղղագրական հիմնական կանոնները, անցածի սահմաններում գրեն անսխալ և դյուրընթեռնելի ու գեղեցիկ ձեռնպրով:

## 2. Գրանանաչության ուսուցումը

Առաջին գասարանում ուսուցչի հիմնական խնդիրը գրաձանաչության ուսուցումն է: Սակայն դրագիտության հիմքը դրվում է այս գասարանում: Հաճախ 2-րդ, 3-րդ, անգամ 4-րդ դասարանում յերեխայի լեզվական ուսակությունների պակասաւոր կողմերը հետևանք են ժամանակին գրաճանաչության ուսուցման վատ դրվագքքում: Տարիների ընթացքում այդ ուղղությամբ մեր կատարած զիտումներն ու ուսումնափրությունները ցույց են տվել, վոր շատ դեպքերում 2-րդ, 3-րդ դասարաններում յերեխաների՝ ընթերցվելիք տեքստին հարազատ չմնալը, այն աղավաղելը, անզիր կարդալու անդենցը, վոչ սահուն, կցիտուր, յերեխան հեղեղով կարդալը, կետագրության անտեսումը կարդացածը չմասսատավորելը, յերգեցիկ տանով կարդալը (մա-

հավանդ չափածոների), ոժանդակ բայցրի անջատ կարդալը, բաւնալոր խոսքի պակասությունները, վատ ձեռագիրը և այլն հիմնականում արդյունք են ժամանակին զրածանաչության ուսուցման վատ դրվագքի:

Դրան հակառակ բաղմաթիվ դրական փաստերը, վորոնք հետևանք են զրածանաչության ուսուցման շրջանում ուսուցիչների կատարած լավ աշխատանքի, ել ավելի յեն հիմնավորում այս պնդումը:

Դրածանաչության ուսուցման անբավարար գրվածքի հիմնական պատճառն այն է, վոր մանավանդ մանկավարժական քիչ փորձ ունեցող և հատկապես սկսնակ դասառներից շատերը մովին չեն արդապետում հնչյունական վերլուծական-համագրական մեթոդին և չեն բավարարում նրանից բղկող բոլոր պահանջները, թեև պարապում են այդ մեթոդը: Դրա հետևանքով շատ ուսուցիչներ իրենց գործնական աշխատանքում կիրառում են այնպիսի յեղանակներ, վորոնք վոչ մի կապ չունեն հնչյունական վերլուծական-համագրական մեթոդի հետ և բղկող են վաղուց մերժված զանազան մեթոդներից:

Եկեղեց մի քանի որինակներ.

1. Դասատուն 10 աշակերտի կարդալ և տալիս տված զարը (Զ. Աճեմյանի «Այրենարան»-ի 10-րդ եջը՝ Ո. ո. 1 որ, որ, ուրոր, Սու-սո): Բոլորն ել կարդում են տառատառ: Դասատուն դժուն և յերեխաների կարդալոց և լավ կարդալու Փորինակ առար համար ինքն և կարդում: Չորս աշակերտ դասավից հետո կարդում են կրկին տառատառ: Դասատուն յերեք անգամ իրար յետելոց կարդում և և խմբովին բառ առ բառ կրկնել տալիս յերեխաներին: Սրանով ավարտվում ենին դասի հետ կապված աշխատանքը: Սնցնում ենոր նյութին՝ «շ» հնչյունի և տառի ուսուցմանը («Այրենարան», եջ 11): Դասատուն հարցնում են աշակերտներին՝ շորը վորտեղ են կարում: Յերեխաների պատասխանից հետո, զրատականին գրում ե «որ» և հարցնում ե, թե ինքն ինչ ե զրել: Պատասխանում են՝ «Չոր»: Դասատուն ուղղում ե և հարցնում, թե ինչ պետք և ավելացնել վոր դառնա «Չոր»: Յերեխաները պատասխանում են՝ «Չ»: Այսուհետեւ՝ «Չ» հնչյունով մի քանի բարեր ասելուց հետո, դասատուն կարդում ե դասագրքի 2-րդ եջի բառայունակները («Չոր» որ, որոր, շորոր, շոր, Սաշա, Շուրա):

Ապա դասատուն կրկին յերկու անգամ կարդում ե այդ բառայունակները և բառ առ կրկնել տալիս յերեխաներին:

Վերջում կարդալ է առջես տեսանձին յերեխաների: Նրանց դժվառանալոր գեղքում ինքը բառը կարգում և և կրկնել տալիս նրանց: Սրանով ել վերջանում ե զարը:

2. Մի այլ գասատու հարցնում ե զարը՝ «Սար» (Զ. Հայրապետյանի «Այրենարան», եջ 6): Յերեխաները վրա տալով անուզիր կարդում են՝ «սար, սա, սար, սաս, արա, Արա, սաս, սուր»: Եատերը շփոթվում են բառերը և այլ բան են ասում, քան զըրշած ված ե: Դասատուն մեծ մասամբ չի նկատում կատարված սխալները, ամրագովին տարված լինելով կարդապահություն պահպանելու հոգավույք: Ապա զասատվի պառաջարկությամբ յերեխաները գրատախտակին գրում են «արա», «սաս», «սուր» բառերը սաւելայն կարդում են տառատառ:

Սնցնում ենոր նյութին՝ «Պար» («Այրենարան», եջ 7): Դասատուն հարցնում ե, թե ով ովար ունի: Յերեխաներից մի քանիսը պատասխանում են, վոր իրենց ունեն: Դասատուն դասատիրքը բաց և անում և ցույց տալով համապատասխան նկարը, հարցնում ե, թե այսուղ ինչ ե նկարված: Աշակերտները պատասխանում են՝ «պար»:

—Պարն ինչնիվ և զրվում, — հարցնում ե դասատուն:

—Մեծատառով, — պատասխանում են յերեխաները:

Վերջապես զասատուն դիմուի յե ցցում, վոր «ով» տառով:

—Յես ձեզ ցույց կատամ օվ» տառը, — տառում ե դասատուն և ցույց և տալիս մեծատառն ու փոքրատառը միաժամանակ:

Այսուհետև սկսվում ե նյութի գրքով ընթերցումը: Դասատուն մեկ անգամ ինքը կարդում ե (սախավես պատվիրելով), վոր յերեխաները գրքերը բաց չանեն), ապա յերկրորդ անգամ և կարդում (բաց անել տալով գրքերը), յերրորդ և չորրորդ անգամ ել կարդում և զիրքը բարձր բռնած և յուրաքանչյուր բառը զրչակոթով յերեխաներին ցույց տալով, վերջապես յերեք անգամ ել կարդում և և բառ առ բառ խմբովին կրկնել տալիս յերեխաներին: Այսուհետեւ գրատախտակին ինքը գրում ե «պար, պատ», յերեխաներից յերկուսին գրել տալիս «պար», «պատ» և առաջարկում կարդալ: Յերեխաները կարդում են ասուտառ: Սնցնում են դասագրքով ընթերցմանը: Յերեխաները դժվարանում են վանեկրով կամ ամբողջական բառերով կարդալ և զիմում են տառատառ: Կարդալու միջոցին Դասատուն «ոգնության և զալիս» ինքը կարդում ե, յերեխաներին կրկնել տալիս, վերջում մեկ

անգամ ել գասառվի հետ խմբովին կարդում են, և զբանով վերա ջանում ե գասը:

3. Նոր հնչյունը և տառը սովորեցնելու մի այլ ձև: Դասառուն սովորեցնելու յեւ «ը» հնչյունը և տառը: Գրատախտակին կախում ե սարի նկարը և արտասանելով՝ «սար», հարցնում՝ վերջին ատոն ի՞նչ ե: Յերեխաները ճիշտ պատասխանում են: Կրկին դիմում ե աշակերտներին. «Ո՞վ կարող ե այնպիսի բառ ասի, վոր «ը» տառը լսվի»: Յերեխաները դժվարանում են «ը» հնչյունով բառեր ասել: Նկարի տակ փակցնում ե օս» տառը (ձեռագիր): Յերեխաները կարդում են: Ավելացնում ե օա, յերեխաները կարդում են՝ «սար»: Դասառուն ուղղում ե, ապա «սա» մասնիկին ավելացնում ե «ը», յերեխաները կարդում են «սար»:

Շարունակությունը նախորդների պես, միայն այն տարրերությամբ, վոր դասառուն ինքն ել բառերը կարդում ե տառատառ և յերեխաներից ել պահանջում, վոր իր նման կարդան:

Այս կարգի գասեր շատ կարելի յեւ իլյուսնորացիայի յենթարկել սակայն կարիք չլա, բերված որինակներն ել բավական են ցույց տալու համար, թե գրաճանաչության ուսուցման հնչյունական վերլուծական-համադրական մեթոդին չտիրապետող ուսուցիչներն ինչպիսի խարբափումների մեջ են ընկնում և վորպիսի կոպիտ սխաներ են կատարում:

Տեղը չհամարելով այստեղ վերը բերված դասերի մանրամասն վերլուծությամբ զբաղվելը, պետք ե միայն ասել, վոր գրաճանաչության այս կերպ տարվող ուսուցումը վերջիվերջու հանգում ե նրան, վոր յերեխաները կամ անգիր են անում տված դասը, ուրեմն՝ փաստորեն չեն կարդում, կամ, յեթե փորձում են խակապես կարդալ, ապա տառատառ են կարդում և դժվարանում են համադրել հնչյունները (հեգելով են կարդում):

Դասառուներից փոմանք, իբր թե յերեխային հեգելով կարդալուց զերծ պահելու նպատակով, առաջարկում են մտքում տառատառ կարդալ ապա բարձրածայն ամբողջական բառեր կամ վանկեր արտասանել: Նրանք չեն գիտակցում, վոր ըստ եյտթյան վոչ մի տարբերություն չկա կարդալու այս յերկու ձևերի միջև:

Հնչյունական վերլուծական-համագրական մեթոդով յերեխաներին նոր հնչյունը և տառը սովորեցնելու աշխատանքը պետք ե ունենա հետևյալ ընթացքը:

Համառոտ զրույց ունենալ յերեխաների հետ տվյալ դասի

նյութի հետ կապված մեծակիր գունավոր նկարի շուրջը (նաև խաղես փակցնելով այն գրատախտակին):

Այդ զրույցից առանձնացնել 3—4 այնպիսի բառերից կազմված մի նախադասություն, վորոնց արտասանությունը համապատասխանում է զրույցին: Այդ նախադասությունը կրկնել տալ 2—3 աշակերտի, ապա խմբովին:

Նախադասությունը վերլուծել բառերի, բառերը վանկերի և հնչյունների: Տված բառերի մեջ արտասանել ծանոթ հնչյունները, արտասանել նոր հնչյունը:

Առանձնացնել նոր հնչյունը և արտասանել տալ առանձին աշակերտների և խմբովին: Յերեխաներին առաջարկել նոր հնչյունով բառեր կազմել:

Առաջարկել այդ բառերը վերլուծելու միջոցով ցույց տալ նոր հնչյունի տեղը բառի մեջ (բառի սկզբում, բառի մեջ, բառի վերջում, բառերը բազմավանկ լինելու դեպքում ցույց տալ նաև, թե նոր հնչյունը վոր վանկի մեջ ե):

Պահանջել բառեր ասել, նախապես նշելով նոր հնչյունի տեղը (ասել բառեր, վորոնց մեջ նոր հնչյունը, լինի բառի սկզբում, բառի միջում, բառի վերջում, լինի առաջին վանկում, յերկրորդ վանկում):

Այս վարժությունների ընթացքում առանձին ուշադրություն պետք է դարձնել այն յերեխաների վրա, վորոնք դժվարանում են նոր հնչյունով բառեր ասել: Ամեն կոնկրետ դեպքում պետք է պարզել յերեխայի դժվարանալու պատճառը և համապատասխան աշխատանք կատարել նրա հետ: Այս դեպքում յերեխայի դժվարանալու պատճառները կարող են լինել՝ կամ հնչյունը լավ չմըռնելը, կամ բառապաշտիկ աղքատությունը: Առաջին դեպքում պետք է լրացրցիչ ֆոնետիկ աշխատանք կատարել յերեխայի հետ, յերկրորդ դեպքում՝ հոգ տանել հետագայում նրա բառապաշտիկ հարսացանելու:

Այս վարժություններից հետո, յերբ դասառուն համոզվում ե, վոր յերեխաները լավ ըմբռնել են նոր հնչյունը, կարողանում են նոր հնչյունով բառեր ասել, այդ բառերը վերլուծելով ցույց տալ հնչյունի տեղը, միաժամանակ կարողանում են վերլուծածը կրկին համադրել ու ամբողջական բառեր ստանալ, անցնում և շարժական առանձին աշխատանքին: Դասառուն նախ իր մոտ յեղած դասարանական մեծապեկիր շաբաթական տառերից ջոկում և յերեխաներին ցույց ե տալիս համապատասխան տպագիր տառը և

հայտնում նրանց, մորդական սովորած հնչյունի տպագիր պատճեն կերն ե՝ տառը:

Նոր տառը խմբովին և անհատորեն կարդալուց հետո, յերեսաները իրենց մոտ յեղած փոքրադիր շարժական ձևերից ջոկով և ուսուցչն ցույց են տալիս նույն տառը:

Դասառուն առաջարկում ե շարժական տառերից բառեր կազմել Այդ բառերը նախազես ընտրված պետք ե լինեն դասառվի կողմից (մեծ մասամբ տվյալ դասի նյութից) և հնչյունական վերլուծության յենթարկված բանավոր անալիզի ժամանակ:

Եկըկու և ավելի վանկերից կազմված բառերը շարժական տառերով կազմելուց առաջ պետք ե վանկերի բաժանվեն՝ զործը հեղացնելու և վանկային կառակցությունների պատկերացումը, ըմբռնումը յերեխաների մեջ խորացնելու նպատակով, մի հանգամանք, վոր խիստ կարենու և լավ կարդալու և անսխալ զրելու համար: Շարժական տառերով բառեր կազմելու պրոցեսում ել, անհրաժեշտության գեղքում, վանկերը պետք ե հնչյունական վերլուծության յենթարկվեն: Շարժական տառերով կազմված բառերն անպայման պետք ե կարդացվեն և, ըստ հարկին, կրկին վերլուծվեն ու համադրվեն: Շարժական տառերով այս վարժություններից հետո, յերբ դասառուն համոզվում ե, վոր յերեխաներն առաջարկված բառերը (ուրիշ խոսքով ասած՝ նաև զասի նյութի մեջ յեղած բոլոր համեմատաբար գժվար բառերը) կարողանում են առանց հեղեղու, վանկ-վանկ և ամբողջությամբ կտպակցված, սահուն կարդալ, անցնում ե դասի հաջորդ մասին՝ դասագրքով նյութի ընթերցմանը: Սովորաբար դասառուները նախքան յերեխաներին նոր նյութը կարդալ տալը, մեկ-յերկու անգամ իրենք են կարդում (վոմանք՝ սկզբում յերեխաների զրբերը փակ):

Դիտադրությունները մեզ բերել են այն համոզման, վոր հատկապես բառայունակների նկատմամբ դա վոչ միայն ավելորդ, այլև վասակար մի աշխատանք եւ Այդ բառայունակներում իմաստով իրար հետ գորեն կազ չգևնեցող բառերից բացի, ուրիշ վոչինչ չկա: Ուսուցչի կարդալը միայն նպաստում ե, վոր յերեխաներն այդ բառերն անզիր անեն և կարդալու փոխարեն անզիր ասեն: Միաժամանակ փորձը ցույց և տվել վոր այդ պլիթին մեծ չափով գիմում են այն ուսուցիչները, վորոնց այս կամ այն պատճառով չի հաջողվում, բառերի հնչյունական տնտե-

լիզի և շարժական տառերով վարժություններ կատարելու միջու ցով, յերեխաներին բավարար չափով նախապատրաստել դասառվի նյութը կարդալուն: Սրան վորպիս ապացույց կարող են ծառայել վերը նկարագրված դասերը:

Հնչյունի տպագիր պատկերը (տառը) յուրացնել տալուց հետո դժվար չե սովորեցնել նաև ձեռագիրը Զեռագիրը տրվում ե գրավորի ժամին և ամրացվում զրկու գործողությամբ: Ձեռագիրը տառի պատկերը հստակ գարձնելու համար անհրաժեշտ և համեմատել այն տպագիր տառի հետ և ցույց տալ նրանց նմանությունն ու տարբերությունն իրարից:

### 3. Կարդալու ուսուցումը

Ուսման չորս տարիների ընթացքում աշակերտները պետք ե ձեռք բերեն լավ կարդալու հիմնական ունակությունները: Չորրորդ դասարանն ավարտող աշակերտը պետք է իրեն մատչել տեքստը կարդա ճիշտ, գլուխացարար, արտահայտիչ և պահանջված արագությամբ (մեկ րոպեյում 80—90 բառ): Սակայն աշակերտության մի զգալի մասը ինչպես 1—3, այնպես ել 4-րդ դասարաններում կարդում և դանդաղ, վոչ սահուն (կցկոուր), աղավաղերով տեքստը, անտեսելով տրոհության և առողանության նշանները, տրամադրանական շեշտերը, գաղարները, կարդում են միալար, անջատելով ոժանդակ բայերը, շատ բառեր արտասանում են ըստ ավանդական գլուխության և վոչ ըստ գրական արտասանության: Այս բոլորի հետեւնքով յերբեմ չեն հասկանում իրենց կարդացածը:

Այս բացերը հետեւանք են մի շարք պատճառների՝ կարդալու հիմքի՝ զրաճանաչության սխալ զրվածքի, կարդալու պրոցեսի մեջենայական բնույթի, այն անհրաժեշտ չափով չիմաստավորելու և արտադասարանային ընթերցանության անբավարար գիճակի: Կան և այլ պատճառներ, սակայն հիմնականները սրանք են:

Այժմ կանգ առնենք դասի ընթացքում տեղի ունեցող մեջենայական ընթերցման և այդ կառակցությամբ ուսուցչի զործադրագրած մեթոդների վրա:

Ըսդհանուր առմամբ 1—4 դասարաններում բանավոր դասերի մեծ մասը գործադրվում է կարդալու վրա: Իսկ կարդալու պրոցեսը սովորաբար ընթանում է այսպիս՝ ուսուցիչը տված

հողվածը մասմաս կարդալ և տալիս աշակերտներին մեկը մյուսի  
յետեից և անձամբ, կարդացող աշակերտի, կամ մյուսների միւ  
ջոցով ավելի կամ պակաս չափով ուղղում կատարված սխալները՝  
մեծ մասմաք տեխնիկական բնույթի: Կարդալու աշխատանքը  
չի իմաստավորվում, հողվածը կարդացող աշակերտների առաջ  
խնդիրներ չեն գրվում, և, այսպիսով, կարդալու չափազանց հետ  
տաքրքրական աշխատանքը վեր և ածվում մեքենայական, անիւ  
մաստ, անձետաքրքիր մի գործողության, ուստի զարմանալի չեն  
վոր «զարոցական տաղանդը» յերբեք այնպես սուր չի զգացվում,  
ինչպես նկարագրված ձևով կարդալու ընթացքում և յերբեք աշա-  
կերտների ցրվածության, կարդապահության խանգարման այն-  
քան յերկույթներ տեղի չեն ունենում, ինչպես այս գեպքում:

Դասեր են յեղեւ յերբ ուսուցիչը 45 բողեյի տեսողությամբ  
դասամամից 30—35 բողեն հատկացրել և աշակերտներին տանը  
պատրաստած հողվածի 7—8 անգամ կարդալուն, հարցնելով 15—20  
աշակերտի:

Դասարանում կարդալու աշխատանքին քիչ ժամանակ պիտք  
և հատկացնել, սակայն լավ կարդալ պետք և սովորեցնել:

Վորքնք են լավ կարդալու հատկանիշները:

Լավ կարդում են նա, ով կարդում ե ճիշտ (ճիշտ շեշտակ-  
րությամբ, գրական արտասանությամբ, առանց փոխելու, աղա-  
վազելու տեքստը), գիտակցաբար (հետեւելով կարդացածի իմաս-  
տին և հասկանալով այն), արտահայտիչ (ճայնի յելեջների,  
արամարանական շեշտերի ու դադարների, կարդալու տեմպի աշ-  
րագացման ու դանդաղեցման միջոցով արտահայտելով գրվածքի  
իմաստային ու հուզական նրբությունները), սահուն ու նորմալ  
արագությամբ:

Ուսուցիչներից շատերը բավականանում են միայն կատար-  
ված սխալները մեխանիկորեն ուղղելով, այն ել վոչ բոլոր գեպ-  
քերում և չեն փորձում յերբեմն ցույց տալ գրածի և աշակերտի  
կարդացածի միջև յեղած լուստների տարբերությունը, դրանից  
առաջացած անհեթեթությունները: Այսպես՝ աշակերտը պար-  
տիզան բառը կարդում ե պարտիզան, այլ եֆեկտ կունենա  
մեքենայորեն ուղղելը՝ պարտիզան, այլ՝ յերբ ցույց տրվի բառի  
այլպիսի փոփոխության հետևանքով առաջադրած տեքստի իմաս-  
տի աղավաղումը: Ժամանակի խնայողության տեսակետից նման  
ուղղությունները պետք ե կատարել վոչ միշտ, այլ յերբեմն և ամե-  
նաբնորոշ գեպքերում:

Ավելի քիչ ուշադրություն և դարձվում գիտակցական և ար-  
տահայտիչ կարդալու վրա: Հազվագյուտ են այն գեպքերը, յերբ  
ուսուցիչը տեքստը, լինի այն արձակ, թե չափածո, աշակերտների  
հետ վերլուծության և յենթարկում այդ տեսակետից, այսինքն  
աշակերտների հետ միասին աշխատում և պարզել, թե վորոնք են  
տվյալ բանաստեղծության կամ գեղարվեստական հոդվածի կա-  
ռուցման, առանձնահատկությունները, ինչ մտքեր ու տրամադրու-  
թյուններ են արտահայտում տվյալ բանաստեղծության կամ հոդ-  
վածի առանձին մասերը և գրանցից յուրաքանչյուրն ինչպես  
պետք ե կարդալ վորտեղ պետք և կարդալու տոնը հանդիսավոր  
լինի վորտեղ՝ ստանալից, վորտեղ՝ խորհրդավոր, վորտեղ՝ ու-  
րախ, ցնծագին կամ՝ տիպուր, ընկճված և այլն: Դասատուն կոնկ-  
րետ ցույց չի տալիս, թե հոդվածի կամ բանաստեղծության ըն-  
թերցումն արտահայտիչ գարձնելու համար ինչպես պետք և ոգ-  
տակործել տրամաբանական շեշտերը, դադարները, ձայնի յելեջ-  
ները, իմաստային դանդաղեցությունները, արագացությունները և ընթեր-  
ցությունները:

Շատ դասատուններ ել վոչ միայն ստորին դասարաններում,  
այլև բարձր դասարաններում, զարմանալի անտարերությամբ  
մինչև վերջը հանգիստ լսում են, թե ինչպես աշակերտը յերգե-  
ցիկ տոմով, առանց վորտեղ զգացմունքի, յերբեմն ել իմաստի, վրա-  
տալով բերանացի ասում և այնպիսի գրական գոհարներ, վոր-  
տիսիք Պուշկինի «Կովկաս», «Չաղակին» կամ Դուրյանի «Իմ մա-  
հը», «Եճակ» բանաստեղծություններն են:

Լավ կարդալուն նպաստում ե նաև գերերով կարդալը, դրա-  
մատիգացիան: Դերերով կարդալու անհրաժեշտ եֆեկտն ապահո-  
վելու համար անհրաժեշտ ե, վոր աշակերտն ուսուցչի և դասա-  
րանի ոժանդակությամբ վերը նշված ձևով վերլուծի իր գերը,  
ըմբանի նրա եյությունը, նրա բնորոշ կողմերը, առանձնահատ-  
կությունները և կարդահամապատասխանորեն: Առանց այսպիսի  
նախապարաստական վերլուծական աշխատանքի, վերերով կար-  
դալը վեր կածվի պարզ փոխասցության, վորը ինարկե, վորեւ  
իմաստ ու արժեք չունի: Առանձին աշակերտների՝ տարբեր գե-  
րերի առանձնահատկություններն ավելի խորն զգալ տալու հա-  
մար, յերբեմն կարելի յե մեկի փոխարեն յերկու, յերեք գերում  
հանդիս բերել նրան, ինարկե, վոչ միաժամանակ:

Ստորին դասարաններում, մանավանդ 1-ին և 2-րդ դասարան-  
ներում լավ կարդալուն նպաստում ե նաև խմբվին կարդալը:

Խմբովին կարդալու պրոցեսում առանձին աշակերտները հարմարա վում են ամբողջ գասարանին, նրա տեմպին և առանձին սխալ ներ կատարելու դեպքում միաժամանակ լողությամբ ըմբռնում են ճիշտը և դիտակցում իրենց սխալը Խմբովին կարդալու եֆեկտը մեծ և նաև ժամանակի տնտեսման տեսակետից։ Սակայն խմբովին կարդալն ունի նաև իր առվերոտ կողմերը, վորոնք հիշությամբ հանդես են գալիս, յեթե ուսուցիչը համապատասխան հմտությամբ չի ղեկավարում խմբովին կարդալը։ Նման դեպքերում աշակերտները կարդում են ձգված, յերգեցիկ տոնով, հետո առաջ ընկնելով, նորմալից բարձր տոնով վորանք ճշարով, ոժանդակ բայերը շեշտված անջատ կարդալով և այլն։ Այս թերությունները կանխելու գեղքում խմբովին կարդալը շատ ոգտակար է և պետք ե բավարար չափով ոգտագործել մանավանդ և ին և շրդ գասարաններում։

Լուռ ընթերցումն աշակերտից ավելի քիչ եներգիա յե խլում, վորոն ավելի հանձնարարելի յե բարձր դասարանների համար, տարրական դասարաններում նույնապես գործադրվում ե, հաշվի առնելով նրա վորոշ առանձնահատուկ կողմը։

Լուռ ընթերցումն աշակերտից ավելի քիչ եներգիա յե խլում, քան բարձրածայնը, վորոշ դաշյամաններում, որինակ, հասարակական ընթերցարանում, վորտեղ շատերն են միաժամանակ կարդում, մի սենյակում, վորտեղ ուրիշներն ել են պարազում և այլն, հնարավոր չե բարձրածայն կարդալը ուստի լուռ կարդալու ունակության զարգացման խնդիրը հանդես ե զալիս և վորակի անհամեստելություն։ Դասին սովորաբար լուռ ընթերցում հանձնարարվում ե զանազան առաջադրանքներ կատարելու և նոր հոդվածի կարդալուն նախապատրաստելու համար։

Լուռ ընթերցանության միջոցին պետք ե ուսուցիչը հետեւ, վոր իրոք բոլոր աշակերտները կարդան։ Հաճախ վորոշ աշակերտներ ձևացնում են, թե կարդում են, սակայն իսկապես չեն կարդում։ Վերջում ուսուցիչը պետք ե ստուգի տված առաջադրության կատարումը և հատկապես հարցերն ուղղի այն աշակերտներին, վորոնց նկատմամբ կասկածում ե, թե կարդում եյին։

#### 4. Բանավոր խոսքի ուսուցումը

Աշակերտի բանավոր խոսքի զարգացումն ընթանում ե՝ նրա բառապաշտարը հարստացնելու, այդ բառապաշտարը գունդկաբանությունից բարբառայնությունից և անտեղի ոտարաբանություն-

ներից մաքրելու, աշակերտին գրական լեզվի քերականական սխատեմին ընտելացնելու, նրա շարադրական կարողությունները զարգացնելու, խոսքի պատկերավորությունը ճոխացնելու և ընդունարապես խոսքի կուլտուրան բարձրացնելու զանազան այլ միջոցներով։

Վորքան բաղմակողմանի խորն ու մեծ են մարդու գիտելիքները, այնքան ավելի հարուստ և նրա լեզուն։

Այս կապակցությամբ առաջին յեղակացությունը, վորին պետք ե հանգել, այն ե, վոր բառիս լայն իմաստով լեզվի ուսուցմամբ զբաղվում են վոչ միայն հայոց լեզվի, այլև բոլոր մասացած առարկաների գասատուները, սակայն, վորովհետև նրանցից շատերը չեն գիտակցում կամ, գիտակցելով հանդերձ, անտեսում են իրենց այդ կարեւոր գերը, այդ պատճառով նրանք հաճախ լեզվի ուսուցչին ոժանդակելու փոխարեն, խանգարում են նրան (հարկավ, դրանով առաջին հերթին հարված հասցնելով իրենց ավանդած առարկայի հաջող յուրացմանը)։

Յերկրորդ յեղակացությունը, վոր պետք ե անել, այն ե, վոր լեզվի դասատուն պետք ե ունենա բազակողմանի պատրաստություն, նա իր առարկային լավ տիրտապետելուց բացի, առնվազն իր և նախորդ դասարանների ծրագրերի սահմաններում պետք ե իմանա բոլոր հիմնական առարկաները և ծանոթ լինի իր աշակերտների լեզվական պաշարին՝ վոչ միայն իր առարկայի գծով որվածի սահմաններում, այլև մնացած բոլոր առարկաների գծով աշակերտի ստացածի։

Այս պահանջները յեթե մի փոքր դժվար իրավործելի յեն 5—7-րդ դասարաններում (ընդունելով վոր լեզվի ավանդումը սահմանափակվում ե 7-րդ դասարաննով), ապա դա միանգամայն իրավործելի յե 3-րդ և 4-րդ դասարաններում (1-ին և 2-րդ դասարանների նկատմամբ այդ խնդիրն առաջ չի գալիս, քանի վոր այդ դասարաններում բոլոր հիմնական առարկաները մեկ ուսուցիչ ե ավանդում)։

Մրանք կարեւոր նախապայմաններ են լեզվի ուսուցումն իր պատշաճ բարձրության վրա դնելու համար։

Աշակերտի բանավոր խոսքի զարգացման աշխատանքը դըպերոցում սկսվում ե յերեխայի գպրոց մտնելու հենց առաջին որվանից։ Գրաճանաչության ուսուցման նախապատրաստական շըրջանում ուսուցիչը զրածանաչության հետ կապված անմիջական աշխատանքներից բացի, ծանոթանում ե յերեխաների լեզվական

կարողություններին, հատկապես բառապաշարին և սկիզբը դնում  
նրա բանավոր խոսքի զարգացման, աղատ արգահայտվելու ու  
նակության:

Բուն գրաճանաչության շրջանում և հետագայում շարու  
նակելով այս աշխատանքը, միաժամանակ գործադրում և աշա-  
կերտի բանավոր խոսքի զարգացմանը նպաստող նորանոր մի-  
ջոցներ՝ կարգացած հոգվածների մեջ յեղած անձանոթ բառերի  
բացարություն, կարգացածի վերլուծություն, զժվար գարձվածք-  
ների, համեմատությունների, այլաբանությունների, պատկեր-  
ների և այլն բացարություն, կարգացածի բավանդակության  
զանազան յեղանակներով բանավոր վերաբարդություն, քերա-  
կանական հատուկ վարդություններ և այլն:

Աշակերտի բանավոր խոսքի զարգացման համար, ինչպես  
մերեւմ նշեցինք, կարեւոր նշանակություն ունի նրա ակտիվ  
բառապաշարի հարստացումը: Իսկ աշակերտի բառապաշարի հարս-  
տացման համար եյական նշանակություն ունի ուսուցման դի-  
տողականությունը՝ մանավանդ ստորին դասարաններում, փոր-  
տեղ աշակերտների մտածողությունն ավելի կոնկրետ և:

Խորհրդային գիդակտիկայի այս կարեւոր սկզբունքը մանա-  
վանդ վերջին տարիներս կարծես մոռացության և արվել հայոց  
լեզվի ուսուցման գործում: Բառերի բացարությունը տրվում և  
մեծ մասամբ վերացականորեն, առանց տվյալ իրը, առարկան,  
կամ նրանց պատկերն աշակերտներին ցույց տալու, վորի հետե-  
լանքով աշակերտների պատկերացումը լինում և աղոտ, մոտա-  
վոր, յերբեմն սխալ: Դա յե պատճառը, վոր հաճախ աշակերտ-  
ներն իրենց գործածած բառերի, անդամ գարձվածքների իմաստը  
չեն հասկանում, շատ բառեր տեղին չեն գործածում:

Աշակերտը պատմում և, «Բնկեր կենինի կիսանդրին կանգ-  
նած իր բարձր պատվանդանի վրա» կտմ՝ «Իմ հայրը ստախա-  
նովական ե» և այլն:

Յերկրորդ բացն այս աշխատանքում այն և, վոր աշակերտ-  
ների բառապաշարի հարստացումը կատարվում և միակողմանի.  
զա մեծ մասամբ կապվում և զրբի հետ, իսկ եքսկուրսիաները,  
վորոնց ընթացքում յերեխաները կոնկրետ, կենդանի պատկերա-  
ցումներ են ստանում, համարյա բացակայում եւ Աշակերտների  
բանավոր խոսքի զարգացման նպաստական համարյա չեն ոգտա-  
գործում նույն գեղարվեստական նկարները (բացառությամբ 1-ին

դասարանների, վորտեղ ոգտագործում են սխեմատիկ նկարներ  
և այն ել վոչ բավարար չափով), վորոնք իրենց դիտողականու-  
թյամբ և հարուստ բովանդակությամբ աշակերտների բանավոր  
խոսքը և լեզվական ստեղծագործությունը զարգացնելու անգնա-  
հատելի միջոցներ են:

Համեմատաբար քիչ տեղ և արվում նաև աշակերտների ինք-  
նուրույն պատմումներին: Այս ուղղությամբ կատարված աշխա-  
տանքը սիստեմատիկ բնույթ չունի:

Սակայն զրբի հետ կապված՝ աշակերտի բանավոր խոսքի  
զարգացման ուղղությամբ սարվող աշխատանքն ել զերծ չե թե  
դիտական և թե մեթոդական լուրջ թերություններից: Առաջինն  
այդ թերություններից, վոր այստեղ պետք են նշել, դա կարդալու  
հետ կապված թերություններն են, վորոնց մասին իր տեղում  
խոսեցինք: Պարզ ե, վոր կարգալու թերությունները չեն կարող  
չաղցել նաև աշակերտի բանավոր (ինչպես և զրավոր) խոսքի վրա:

Աշակերտի բանավոր խոսքի զարգացման վրա բացասաբար  
և ազգում նաև այն հանգամանքը, վոր յերբեմն ուսուցիչներն  
իրենք վորոշ ճիշտ չեն բացասարում:

Դասագրքերում հանդիպած վոչ գրական և վոչ հայերեն բառե-  
րը պատմելիս գրականով չեն փոխարինվում (խանչալ, մաշինա,  
սումկա, յափունչի, խարջ, դուշման, մերժան և այլն):

Աշակերտի բարբառախոսության վրա քիչ և ուշադրություն  
դարձում: Գրական և մի շարք բառերի աղավաղումները չեն  
ուղղվում (որինակ՝ պախկվել (պահվել, թափնվել), սկսեցիմ, յեղ-  
բոյրս, խելույին, բայից, առաջի (առաջին), հլա, սովորանք և այլն):  
Կան դասատուներ, վոր իրենք ել զերծ չեն նման թերու-  
թյուններից:

Նրանցից վոմանք ել զործ են ածում Շըշորս (Շորս),  
Պետրուրդ (Պետերբուրդ), Պետրոփ (Պետերգոֆ), Բուդյոնինը  
(Բուդյոննին) և այլն: Թույլ են տալիս նաև լեզվական այնպիսի  
սխաներ՝ դասագրքի վրա նայի, ով կարող ե այբբենար  
անըն անզիր ասել (այբբենը), ժողովուրդն ուզում են, ան-  
ցյալ անզամ բերանացին (վասանավորը) մի քանի ընկեր-  
ներ (խոսքը շնորդ դասարանին և վերաբերում) չգիտեյին: Մոտե-  
ները փորձում են զարձակել մեր յերկիրը, ուսումնասիրել մեր բանա-  
կին, նրանց քանակին, ճանապարհներին, ով կարող ե բոլոր  
բովանդակությունը միանգամից պատմել և այլն:



Բարձմաթիւի գեղքերում բարդ և ածանցավոր բառերի աժեհնաստոյդ և ամենապարզ բացարությունը կարելի յետալ այդ բառերի սոսակաբանման միջոցով, մի ձև, վորը վոչ միայն կպարզ դի բառի իմաստը, այլ և աշակերտներին կինդի ինքնուրույն կերպով բարդութիւնը կատարելու ստուդագործական ճանապարհի վրա: Դժբախտաբար մեր ուսուցիչներից քչերն են ոգտագործում բառերի բացարության այս միանգամայն բնական յեղանակը:

Աշակերտների բառապաշարը հարստացնելու, լեզվի նրբություններն աշակերտներին զիտակցել տալու և նրանց լեզվարդզացողությունը դաստիարակելու, նրբացնելու տեսակետից մեծ նշանակություն ունեն հատկապես համանիշ բառերի բացարությունը, նրանց իմաստների միջև յեղած նրբությունները բացահայտելու աշխատանքը, ինչպես և նույն բառի տարբեր իմաստներով և տարբեր նշանակությամբ (տարբեր առողջերով) զործածությունը: Խսկ յերբեմն դաստունները վոչ միայն այս կարեր աշխատանքը չեն կատարում, այլև բառերի բացարությունը հաճախ տալիս են տեքստից կտրված, վորը, իհարկե, միաժամանակ դժվարացնում և տեքստի ըմբռնումը:

Շատ ուսուցիչներ թերագնահատում են բացարական բառատեղերի անհրաժեշտությունը և դասարանում բացարպահ բառերն աշակերտներին զբել չեն տալիս բառատեղերում: Գեթ Յարդ դասարանից ոկտած բացարական բառատեղերի գործածությունը պարտադիր պեսք և դարձնել:

Աշակերտի բանավոր խոսքի զարգացման համար, բացի աշակերտի բառապաշարի մշակումից ու հարստացումից, եյական նշանակություն ունի նաև կապակցված խոսելու, իր մտքերն ազատ ու ճիշտ արտահայտելու կարողության զարգացումը:

Սրա համար անհրաժեշտ ենախ պարզ գաղափար տալ աշակերտին խոսքի միավորի՝ նախադասության ճիշտ կառուցվածքի մասին և դպրոցական ուսուցման ամբողջ ընթացքում բոլոր բարեկաների դասերին հետևել, վոր աշակերտն իր կարգացածը վերաբաղեց, մի բան պատմելու, նկարագրելու կամ խոսելու ժամանակ ճիշտ կառուցի նախադասությունները և ամբողջ խոսքը: Շատ գեղքերում ուսուցիչները, մանավանդ վոչ լեզվի դաշտունները, բացառապես ուշադրություն են զարձնում աշակերտների արտահայտած մտքերի ճշտության վրա և անստեսում են նրա խոսքի կանոնավորության ինդիքը:

1—4-րդ դասարանում աշակերտի բանավոր խոսքի գորգայ-

ման յեղանակներից են՝ կարգացած հոդվածի բովանդակության վերաբանությունը նույնությամբ՝ համառոտ կամ ընդարձակ (նախ ուսուցչի հարցերի ոժանդակությամբ, ապա առանց հարցերի), կարգացած հոդվածի բովանդակության պատմումը վերակառուցված պլանով, կարգացածից առանձին եղիղողից պատմումը, թեմատիկ պատմումը, մի քանի հոդվածների ողտագրծմամբ կոմբինացիոն թեմատիկ պատմումը, հոդվածն ստեղծագործական ձևով լրացնելը՝ սկզբից, միջում և ավելացնելով, սիեմատիկ և գեղարվեստական նկարների բովանդակության պատմումը, նախադասության, սիսեմատիկ պատմվածքի գեղարվեստական ընդարձակումը, տված բառերի կամ տված թեմայի հիման վրա պատմվածքի հյուսումը, տեսածը, լուծածը, ապրածը ինքնուրույն-ստեղծագործորեն պատմելը և այլն:

Մեր գլոբոցներում նշած ձևերից տիրապետող տեղ է զրավում կարգացած համառոտ բովանդակության վերաբանագրությունը՝ ուսուցչի հարցերի ոժանդակությամբ և առանց հարցերի:

Ինքնուրույն ստեղծագործական պատմումը և դրա համար անցման հոտապ համադիմուսող ձևերը, վորոնց թվում նաև գեղարվեստական նկարների բովանդակության պատմումը, դժբախտաբար չնշին տեղ են զրավում:

Եյսպիսով, բանավոր խոսքի զարգացման ուղղությամբ տարավող աշխատանքում ևս միակողմանիությունը և շարժում մեծ տեղ են զրավում:

Աշակերտի բանավոր խոսքի զարգացման համար մեծ նշանակություն ունի նաև պատմելու ձևը: Պատմումը դպրոցում մեծ ժամանակ կատարվում է ողբիմիտիվ ձևով, այլ կերպ ասած, աշակերտը անգամ 3—4-րդ դասարաններում կարգացածի բովանդակությունը վերաբանում և անզիր արածի ձևով, ուղղակի խոսքը չդարձնելով անուղղակի, հարց ու պատասխանը, տարբեր մանձերի միջև տեղի ունեցող խոսակցությունը նույնությամբ բերելով և այլն:

Անհրաժեշտ է, վոր ուզման 2-րդ տարվա յերբորդ կիսամյակից պատիճանաբար, իսկ 3-րդ, 4-րդ դասարաններում պարտադրաբար աշակերտներն իրենց կարգացածը պատմեն յերբորդ դեմքով: Աշակերտի բանավոր խոսքի զարգացմանը մեծ չափով նպաստում են նաև տարբեր գործող անձերի անունից պատմելը: Աշակերտի պատմելու ընթացքում պետք են նրա խոսքի

կանոնավորությանը, կատարած սխալները վոչ թե ամեն դեպքում մեքենայորեն պետք ե ուղղել և անցնել այլ նաև պահանջել, վոր աշակերտն ինքն ուղղի իր սխալները և հարկ յեղած դեպքում տա նաև անհրաժեշտ բացատրությունները:

Պետք ե միաժամանակ հետեւ վոր աշակերտը տվյալնութի կապակցությամբ գործածի վորոշ բառեր, դարձվածքներ, վաճեր, պատկերավոր արտահայտություններ և այլն, այլ խոսքով ասած՝ դիտակցաբար ձգտի հարստացնել իր լեզուն:

### 5. Գրավոր խոսքի ուսուցումը

Գրավոր խոսքն ունի յերեք կողման՝ մտքերի գրավոր շաբարումը, բ) գրության արտաքին կողմը—գեղագրությունը և գ) ուղղագրությունը, կապված կետագրության հետ:

Գրավոր խոսքի այս յերեք կողմերի մշակումը կատարվում է տարբեր միջոցներով ու տարբեր մեթոդներով։ Աշակերտի՝ իր մտքերը զրավոր ճիշտ ու կանոնավոր շարադրելու կարողությունը սերտորեն կապված են նրա բանավոր խոսքի զարգացման հետ, ավելին՝ զգրոցական պրակտիկայում զրավոր շարադրության նյութը սովորաբար նախ մշակվում, նախապատրաստվում է բանավոր։

Սակայն բանավոր և զրավոր խոսքի նույնացումը, անզամբ պահանջակառության տեսակետից, ճիշտ չեր լինի նրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատուկ կողմերը և մշակման ուղղույն պայմաններն ու մեթոդները։

Փորձը ցույց է տվել, վոր նույն աշակերտի կողմից նույն նյութի բանավոր և զրավոր շարադրումը պալիս ե տարբեր արդյունքներ։ Այս տեսակետից միանգամայն ճիշտ են վարդում այն ուսուցիչները, վորոնք չեն բավարարվում շարադրության նյութի միայն բանավոր մշակումով, այլ նաև զրավոր նախական մշակում են կատարում, այն ե՝ հանձնարարում են աշակերտներին տանը զրի առնել դասարանում բանավոր մշակմանը, առա վորոշված որը կողեկտիվ քննության են յենթարկում 3—4 աշակերտի զրածները, համապատասխան ուղղումներ, լաւցումներ, ձեափոխություններ կատարում և նոր միայն զրորմ տեսքերում։

Ուսուցիչը դասարանում առանձին աշակերտների շարադրությունների քննարկումը ղեկավարելիս և անհրաժեշտ ուղղումները մտցնելիս աշխատում է ամեն կերպ պահանջնել և խրախուսել աշակերտի ինքնուրույնությունը, նրա ստեղծագործությունը։

Եաւ ուսուցիչներ առարկում են զարագրության նյութի գրավոր նախապատրաստման դեմ, գտնելով, վոր նյութի բանավոր նախապատրաստման հետո նրա զրի առնելը հենց փառը շարագրությունն ե, վորը կարելի յե ոկզրից զրել տեղուկում, ապա աշակերտներից մի քանիսի շարագրությունները կողեկտիվ քննարկման յենթարկել կատարանում և ցույց տալ կատարված սխալներն ու թերությունները։

Ինարկե, կարելի յե և շտակը այսպիս ել անում են, սակայն արդյունքն այն չի լինում, ինչ վոր տռաջին գեպքում Միանգամայն պարզ ե և հոգերանական, վոր ուսուցչի կողմից արդեն ուղղված և գնահատված շարագրության հետագա քննարկը կումը չի կտրող այն հետաքրքրությունն ու շտհագրդութածությունն առաջացնել աշակերտների մեջ, ինչ վոր շարագրության մշակման պրոցեսում կատարված քննարկումը։ Եարագրության նյութի նախնական զրավոր մշակման զեմ առարկողները հոգերանական այս կարենու մոմենտը հոշվի չեն առնում։

Եարագրությունների տեսակների և թեմատիկայի վրա այս տեղ հարի չկա մանրամասն կանդ առնելու բանավոր խոսքի ուսուցմանը վերաբերող կետում նշվածները հավասարապես վերաբերվում են նաև զրավոր շարագրություններին։

Գրավոր խոսքի աւուցման գծով հիմական բացը մեր գրագրություններում այն ե, վոր հասկապես ստեղծագրծական ընույթի շարադրություններ շատ քիչ են զրում, ավելի մեծ տեղ ե արվում փոխադրություններին՝ մնցած հոգվածների բովանդակության համառոտագրությանը, հոգվածի հետ կապված ստեղծագործական զրավորները նույնպես չի զրավորում։ Համարյա բոլորին բացակայում ե զեղարվեստական նկարների բովանդակության զրավոր շարադրությը։ Մինչդեռ զրավորների վերջին տեսակները չափազանց կարենու են աշակերտի բանավոր խոսքի զարգացման համար։

Գեղագրության աշխատանքը սիստեմատիկ ու ընդհանուր առմամբ լավ ե տարիում 1-ին և 2-րդ դասարաններում։ Յերրորդ և չորրորդ դասարաններում զեղագրության վրա անհրաժեշտ ուշագրությունը չի դարձվում։ Այդ ե պատճառը, վոր հաճախ 2-րդ դասարանի աշակերտն ավելի կանոնավոր, ավելի զյուրընթեռների ձեռագրով ե զրում, քան 4-րդ դասարանի աշակերտը։ Մինչդեռ հատկապես 3-րդ դասարանում հատուկ ուշագրություն պետք ե դարձնել ձեռագրի վրա, վարովնետեւ այդ դասարանում

նախ<sup>4</sup> փոխվում և տեսրի ձեզ, յերկրորդ՝ սկիզբ եւ գրվում յերկուականի գրության, յերրորդ՝ այդ դասարանից սկսած ուսման պլանով այլեն, զեղսպրությանը հատուկ ժամեր չեն հատկացվում:

Սնկախ նրանից, թե այս կամ այն դասարանում գեղազրության հատուկ ժամեր նախառենում են թե վոչ դասառուն գեղագրությանը հատուկ տեղ պետք եւ տայ յիթե, ինարկե, դրա պահանջն զգացվում եւ:

Ուղղագրություն ուսուցող հատուկ գրավորների տեսակները, գորոնք գործադրվում են մեր գպրոցներում, հետեւյալներն են՝ ա) արտագրություն, բ) թելագրություն և գ) քերականական ավագագական վարդություններ:

Ուղղագրական գրավորների այս հիմնական տիպերն իրենց հերթին բաժանվում են զանազան տեսակների, այսպես՝

Արտագրություն՝ ձեռագիր տեքստից (գրից, գրատախտակից, տեսրից), տպագրից, արտագրություն առանց փոփոխներու տեքստը և արտագրություն փոփոխելով կամ լրացնելով բառերը, տեքստը:

Թելագրություն՝ դիտողական, դիտողաբացատրական, դիտողալսողական, լսողական-համախազորշական, ինքնասատուգուգական, ստեղծագործական, ազատ, տանը մշակված տեքստերի, ինքնաթելագրություն, ստուգողական թելագրություն:

Քերականական գաղված ուղղագրական զանազան կանոնների հետո:

Աշակերտական տեսրերի ուսումնասիրությունները ցույց են տվել վոր հատկապես թելագրությունների գծով ավելի մեծ տեղ և արվում ստուգողական թելագրություններին, քան ուսուցողական, մի բան, վոր ճիշտ չեւ:

Գրավորների մեջ բացակայում են ուսուցողական թելագրությունների մի քանի կարևոր տեսակները, ինչպիսիք են՝ ինքնասատուգուշական, ստեղծագործական, ազատ և տանը մշակված տեքստի, թելագրությունները: Յերրորդ և չորրորդ դասարաններում ընդհանուր տամամբ գրավորներ ավելի քիչ են կատարվում, քան սահմանված եւ (շաբաթական 3 գրավոր, վորոնցից մեկը շաբաթություն):

Սակայն ուղղագրության ուսուցման գծով տարիող աշխատանքի հիմնական թերությունն այն է, վոր ուղղագրական նորակով կատարված գրավոր, աշխատանքները զուրկ են ավյալ

դասարանի ծրագրային հյութից բղխող վորոշութիւն սիստեմից: Գրավորները մեկը մյուսի հետ նպատակային կատարելության մեջ չեն, վորոշակի հաջորդականություն չեն հերկայացնում: Այստաղը ուղղության և թելագրության համար տրվում են ովատահական տեքստեր, Մասնավորապես տանն արտագրելու համար աշակերտներին հանձնարարվող նյութերի ընտրությունն ուղղակի մեխանիկորեն եւ կատարվում, դասառուն դասի վերջում (շատ հաճախ դասպից հետո) հանձնարարում եւ այդ ժամին տրված հողվածի կամ հատվածի սուածին 3—4 տողն արտագրել տանը, առանց նախապես ծանոթանալու, թե իր հանձնարարած տողերն արդյոք վորեւ ուղղագրական արժեք ունեն, յիթե այո, առա ինչ չափով տեքստում յեղած ուղղագրական խնդիրները կապվում են ուղղագրական այն կանոննի (կամ կանոնների) հետ, վորով այդ ժամանակամիջոցում զբաղված եւ դասարանը և ինչ չափով նրանք կարող են նորաստել տվյալ կանոնի յուրացմանն ու խորացմանը:

Այդ և պատճառը, վոր հաճախ աշակերտը բերանացի իմանալով ուղղագրական տվյալ կանոննը, այնունիվ գրավորի ժամանակ ալյալ կանոննին վերաբերող բազմաթիվ սխալներ և կատարում, վորովհետեւ այդ կանոննի գործնական կիրառումը նրա համար հասաւուն ունակություն չի դարձել:

Ուղղագրության ուսուցման աշխատանքի մյուս հիմնական բացն այն է, վոր գրավորների ուղղություն և սխալների հաշվառումից հետո, այդ սխալները չեն տիպավորվում, չեն պարզում նրանց առաջացման պատճառները և համապատասխան միջոցներ չեն գործադրվում այդ սխալները վերացնելու և հնարա վոր նոր սխալները կանխելու համար:

Ուղղագրության ուսուցման կապակցությամբ շաբաթության մասին հիշատակություն չանելը, ամենակի տեղիք չգետաք և տայ յենթագրելու, վոր մենք անաեսում ենք շաբաթությունը, վորովես ուղղագրություն ուսուցանելու միջոց: Շաբաթությունը նույնպես նորաստում և ուղղագրության ուսուցմանը, անկայն նրա հիմնական դերը աշակերտների մեջ շաբաթելու ունակություններ զարգացնելու մեջ եւ:

## 6. Քերականության ուսուցումը

Քերականությունը, վորով լեզվի որինաչափությունների և որենքների սիստեմի զիտություն, նպաստում է լեզուն սովորելուն:

Քերականության ուսուցումը մեր զորոցներում, համեմա-

տած անցյալ տարիների հետ, բավականաչափ բարելավվել եւ Թերականության ուսուցումն այժմ տարվում է սիստեմատիկ Սա մեծ չափով արդյունք է քերականության և քերականական վարժությունների գանազգերերի առկայության: Այլևս չենք կարող զանգատվել վոր քերականությունը թերագնահատվում է մեր գոլոցներում, Քերականության ուսուցման գծով այժմ գոյություն ունեցող բացերը հիմնականում բղխում են ուսուցիչների՝ քերականություն լավ չիմանալուց և քերականության ուսուցման մեթոդի կային լավ չտիրապետելուց: Կարելի յե վասահ կերպով ասել, վոր գոլոցի տարրական գասարանների լեզվի գանձառուների, մանավանդ սլանակ և քիչ փորձ ունեցող գասատուների զգալի մասը աշակերտական գասարգրքերով որը-որին պատրաստում է նյութը և ավանդում աշակերտներին: Դրա հետևանագով գասատուներից շատերը հաճախ կատարում են քերականական ամենատարրական սխալները: Խլուսարացիայի համար բերնք մի քանի որինակներ: Ուսուցիչը հատուկ և հասարակ անունների սահմանումը տալիս ե այսպիս: «Հատուկ անուն այն անունն ե, վորից մի հատ կա, հասարակ անուններն այն անուններն են, վորոնցից շատ կա» (բերված ե բառացի): «Լավ» ածականի համեմատական աստիճանն է «ամենալավ»: Քանակական թվականները կարող են լինել մեկից մինչև մեկ միլիարդ: Ըստածանցները բառը ժխտում են: Ուժանգակ բայն առանձին բառ չե: Գոյական անուններ նշանակում ե գոյություն ունեցող առարկաներ: «Գնում» բառը չի կարելի վանկերի բաժանելը բոլոր բառերը կազմված են հոդակապներով և արմատներով: Աշակերտը վերլուծելով ոյես գնում եմ նախադասությունը, ոգնում եմ նշում ե վորպես ստորագյալ, իսկ դասատուն նրան ուղղում ե «գնում»: Դասատուներից մեկը համառելով իր սխալի վրա, յերկար պնդում եր և աշխատում ապացուցել, վոր պարզ նախադասությունն ընդարձակ լինել չի կարող, այլ պետք ե անսլայման լինի համառոտ: Նա բարդ և պարզ ընդարձակ նախադասությունները նույնացնում եր:

Քերականության ուսուցման աշխատանքում մեթոդական կարգի թերություններն արտահայտվում են նրանով, վոր քերականության ուսուցումը մասամբ տարվում է վերացականորեն, սովորած կանոններն անցած հոդվածներից վերցրած համապատասխան որինակներով, տեքստի վրա բարարար չափի վարժություններով չի ամրացվում և այդ կանոնների պրակարի կիրա-

ռումը կայուն ունակություն չի գալձկում: Այդ է պատճառը, վոր հաճախ աշակերտը բերանացի սահուն ասում է քերականական կանոնները, բայց տեքստն ըստ այդ կանոնների վերլուծել և հանաչել չի կարողանում: Ավելին՝ հաճախ աշակերտն աղասի կերպով հոլովում է ամեն մի գոյական, սակայն տեքստի մեջ գոյականի հոլովը վորոշել գժվարանում և Քերականության ուսուցումը մեր գոլոցներում իր բարձրության վրա գներու համար անհրաժեշտ է ամենից առաջ ուսուցիչներին վերապրական վորել: Ի դեպք քերականության ուսուցման մեթոդի կայի վերաբերյալ միակ ձեռնարկը, վորից մեր ուսուցիչները մեծ չափով կարող են ուսուցիչների Ար Հարիբյանի «Հայոց լեզվի մեթոդիկա»-ն և, վորը սակայն հրատարակվել է 2000 տիրաժով, Մանկավարժական ինստիտուտի կողմից և, վորքան մեզ հաջողվել է պարզել մեր ուսուցչության ձևող մեծամասնության ձևոք չի հասել, թեև գիրքը նախատեսնված է ԲՈՒՀՀերի ուսանողության և ուսուցչության համար:

Ուսուցչության պահանջը բավարարելու համար հարկավոր և այդ գիրքը վերաբարակել ավելի մեծ տիրաժով:

## 7. Գեղարվեստական հոդվածի մշակումը

Հայոց լեզվի ծրագրով պահանջվում է Յ-րդ և 4-րդ դասարաններում ուսման տարվա ընթացքում անցնել առնվազն 30-ական հոդված: Իրականում դասատունները տարվա ընթացքում ավելի շատ հոդվածներ են անցնում: Այսպիսով, լեզվին հատկացված ժամերի մեծ մասը գործադրվում է հոդվածների մշակման վրա: Ծրագրով հանձնարարված և դասագրքերում զետեղված նյութերը չնշին բացառությամբ գեղարվեստական ընույթ ունեն:

Այս հանգամանքները հաշվի առնելով, անհրաժեշտ է համառոտ կանգ առնել նաև այն խնդրի վրա, թե գեղարվեստական հոդվածներն ինչպես պետք ե մշակվեն տարրական դասարաններում:

Այդ նպատակով նախ գծենք գեղարվեստական հոդվածի մշակման ընդհանուր պլանը, նշելով հոդվածի մշակման ընթացքը ու նրա հիմնական մոմենտները, ապա այդ կարգով ել խոսենք կատարված աշխատանքի մասին:

Հոդվածի մշակման ընթացքը՝

1. Նախապատրաստական գրույց,
2. Հոդվածի ընթերցումն ուսուցչի կողմից.

3. Աշակերտների կարգալը.  
4. Միաժամանակ հոգվածի մշակումը՝  
ա) լեզվական բացարություններ,  
բ) բովանդակության վերտունություն:  
5. Յեղափակիչ ընթերցում՝ և ընդհանուր յեղակացություններ.

6. Հոգվածի պլանի կազմումը,  
7. Հոգվածի բովանդակության բանավոր վերաբարձրությունը.

8. Հոգվածի ստեղծագործական լրացում.

9. Գրավոր աշխատանքի նյութի մշակում.

10. Գրավոր աշխատանք:

Այս պլանը մոռագոր և, որինակելի, ուստի պարտագիր չե, վոր բոլոր հոգվածներն այս պլանով մշակվեն:

Այժմ տեսնենք, թե ըստ այս հիմնական մոմենտների աշխատանքն ինչպես և տարվում գպրոցներում:

Նախապատրաստական գրույցի նպատակն ե՝ անհրաժեշտության դեպքում տալ նախնական բացարություններ հոգվածը հասկանալի գարձնելու համար, կատ ստեղծել անցածի և նոր նյութի միջև, աշակերտների մեջ հետաքրքրություն առաջացնել դեպի նոր հոգվածը, տրամադրել աշակերտներին և մոբիլիզացիայի յենթերկել նրանց ուշադրությունը: Նախապատրաստական գրույցը կարելի յե կատարել բազմապիսի պրիորներով՝ նայած հոգվածի բնույթին և ուսուցչի առաջադրած խնդիրներին:

Ուսուցիչներից շատերը հաջողությամբ ոգտագործում են այդ յեղանակները՝ նախապատրաստական գրույցն իր նպատակին ծառայեցնելու համար, սակայն շատ ուսուցիչներ ել կոպիտ սխալներ են կատարում: Կան ուսուցիչներ, վորոնք նախապատրաստական գրույցը փոխարինում են տալիք հոգվածի բովանդակությունը պատմելով, կան ուսուցիչներ, վորոնք նախապատրաստական գրույցում բացահայտում են հոգվածի գաղափարական կողմը, կան այնպիսներն ել, վորոնք պահանջված նախապատրաստական գրույցի փոխարեն, զուտ մեխանիկական, ձևական անցում են կատարում՝ Այժմ անցնենք նոր հոգվածի:

Բոլոր այս ձեերն անընդունելի յեն, վորովհետեւ վոչնչով չեն նպաստում նախապատրաստական գրույցի առաջ դրված ինդիքների կատարմանը, ընդհակառակը, նրանցից առաջին

յերկուսը (հոգվածի բովանդակությունը նախապատրաստական պատմելը, հոգվածի գաղափարական կողմի անժամանակ բացահայտումը) յերեխանների ուշադրությունը մոբիլիզացիայի յենթարկելու, նըսանց մեջ բուռն հետաքրքրություն առաջացնելու փոխարեն հակառակ եֆեկտն են տալիս:

Նախապատրաստական գրույցից հետո հոգվածն առաջին անգամ պետք ե կարդա ուսուցիչը: Ուսուցչի առաջին ընթերցումն ունի իր հիմնական նպատակը՝ տալ յերեխաններին ամբողջական գեղարվեստական ապագորություն: Այդ պատճառով ուսուցչի առաջին անգամ կարդալու ընթացքում յերեխանների գըրքերը պետք ե փակ լինեն, յերեխանները միայն կենտրոնացած պետք ե լսեն ուսուցչին: Առաջին ընթերցումը վորեւ նպատակով (բառերի բացարություն և այլն) չպետք ե ընդհատվի և պետք ե լինի արտահայտիչ և գեղարվեստական ընթերցման բուլոր պահանջներին համապատասխան: Առանձին գեղքերում, յերբ հոգվածում յեղած վորոշ անձանոթ բառեր կարող են խանգարել յերեխաններին հոգվածը ճիշտ հասկանալու, կարելի յե հոգվածի առաջին ընթերցման ժամանակ այդ բառերը փոխարինել յերեխաններին համար համար բառերով կամ բնագրի բառի կողքին ասել նաև համանիշը:

Բառերի այս փոխարինումը, կրկնում ենք, կատարվում ե միայն առաջին ընթերցման ժամանակ և միայն այն գեղքում, յերբ հոգվածը հասկանալուն խանգարող բառերը հնարավոր չե գործածել նախապատրաստական գրույցի մեջ և տեղն ու տեղը բացարել, առանց արհեստականություն մացնելու գրույցի մեջ: Դասատուներից շատերը մեղանչում են այս պահանջների դեմ: Լավ, տպագորիչ չեն կարգում, ընթերցումն ընդհատում են և զանազան բացարություններ են տալիս, վոմանք գրաղվում են զանազան մեկնաբանություններով, վորով աղճատում են հոգվածից սպասված տպագորությունը:

Ուսուցիչն առաջին անգամ պետք ե կարդա ամբողջ հոգվածը, անկախ նրանից, թե նրա վոր մասն և տվյալ ժամին մշակելու:

Վորոշ ուսուցիչներ չեն կատարում այս պահանջը, կարդում են միայն հոգվածի տվյալ դասին մշակելիք մասը, ուրիշները, ընդհակառակը, հաջորդ դասերին հոգվածի շարունակությունը ևս յերենք են կարդում, փակել տալով աշակերտական գրերը, վոր միանգամայն ավելորդ եւ:

Հոդվածն ամբողջությամբ կարդալուց հետո, սովորաբար ուսուցիչը յերկրորդ անգամ գրքերը բաց կարդում է հոդվածի տալիք մասը, այն նպաստակով, վոր աշակերտները հետևեն ուսուցչի կարդալուն և ընդորխնակեն նրան։ Ուսուցչի յերկրորդ ընթերցումը պարտադիր չղետք է համարել. կան դասարաններ, վորակեղ յերկրորդ ընթերցումը կարելի յի հանձնարարել լավ կարդացող աշակերտներին։

Հոդվածի հետ կազմած բացարական աշխատանքները պետք է կատարել յերկրորդ ընթերցման միջոցին, անկախ նրանից, թե յերկրորդ ընթերցումը կատարում է ուսուցիչը, թե աշակերտները Սիալ պետք է համարել այս աշխատանքն ավելի հետաձღգելը, վորովհետև մանկավարժական տեսակետից նպատակահարմար չել լրիվ չբացատրված հոդվածը մի քանի անգամ աշակերտներին կարդալ տալ։

Գեղարվեստական հոդվածի մշակման ռեզլությամբ տարվող աշխատանքի հիմնական թերությունը կայանում է նրանում, վոր շատ ուսուցիչներ հոդվածի մշակում ասելով հասկանում են միայն անձանտթ բառերի բացատրությունը և գործնականում այդպես ել վարդում են։ Հոդվածում յեղած առանձին դարձվածքները, պատկերավոր արտահայտությունները, համեմատությունները, այլաբանությունները, հիպերբոլաները, հոգերանական վիճակները և այլն, ինչպես և հոդվածի գաղափարական կողմը կոնկրետ կերպով չեն վերլուծվում և չեն բացատրվում։

Դեռ կան առանձին ուսուցիչներ, վորոնք այդ կոնկրետ վերլուծական-բացարարական, աշխատանքը փոխարինում են հաշուակագիտական ընդհանուր և շարլոն ճառերով կամ Շվեյցարակարարական պատմում են հոդվածի բովանդակությունը։

Յեղափակիչը ընթերցումը, վորն անհրաժեշտ է հոդվածի վերլուծությունից հետո, կրկին ամբողջական տպավորություն ստեղծելու համար, շատ դեպքերում տեղի չի ունենում։

Ինչ վերաբերում է հոդվածի բովանդակության վերաբառությանը, ինչպես արդեն ասացինք բանալոր խոսքի ուսուցման վերաբերյալ կետում, մեծ մասամբ սահմանափակվում է հոդվածի բովանդակության համառոտումով՝ նախ հարցերի ոգնությամբ, ապա առանց հարցերի հոդվածի ստեղծագործական լրացումը, հոդվածի բովանդակության վերակառուցված, այլ պլանով վերապատմումը, քիչ դեպքերում և տեղի ունենում։

Ավելի դոհացուցիչ է կատարվում հոդվածի պահանջման և գրավորի նյութի բանավոր նախապատրաստման աշխատանքը։

Գեղարվեստական հոդվածի մշակման վերաբերյալ ընդհանուր յեղալացությունն այն է, վոր այս կարևոր աշխատանքում ուսուցիչներից շատերի մոտ մեթոդական անհրաժեշտ պարզությունը բացակայում է։

## 8. Արտադրության լնրեցանություն

Բազմաթիվ փաստեր վկայում են, վոր կան հատկապես կարդալու տեխնիկային անվարժ վոչ միայն առանձին աշխարհաբաններ, այլև ամբողջ գաղափարաններ։

Այս բացը գժվաը և վերացնել առանց աշակերտների արտադրության ընթերցանության գործը լավ կազմակերպելու և սիստեմատիկ կերպով զեկավարելու։

Պետք է ասել սակայն, վոր հենց այդ փաստերը միաժամանակ վկայում են, վոր արտադրության ընթերցանության գործը լավ չի դրված մեղ մոտ։ Դրա հիմնական պատճառն այն է, վոր գասատուներից շատերը թերագնահատում են արտադրությական ընթերցանության խոշոր գերը (լեզվի և հատկապես կարդալու տեխնիկայի զարգացում, մատանորիզոնի ընդարձակում, գրական ճաշակի զարգացում, աշխարհայացքի կազմակերպում) և համարյա չեն զբաղվում այդ գործով։

Ցերկրորդ պատճառը մեր գլորոշական գրադարանների անշմբիթար վիճակն է և գրադարանային աշխատողների ցածր վորակը։ Գրադարաններն իրենց զրային փոնդով հեռու յեն աշխեցուների պահանջը բավարարելուց։

Ինչ պետք է անել արտադրության ընթերցանության գործն իր բարձրության վրա գնելու համար։

1. Այս կապակցությամբ առաջին հարցը հանձնարարական ցուցակների կազմություն և ըստ գասարանների։ Այս հարցը հիմնականում կարելի յի համարել լուծված, քանի վոր հայոց լեզվի ծրագրի վերջում արված են այդ ցուցակները։ Հայոց լեզվի դաստիարակությունը պետք է լինի սիստեմատիկարար լրացնել այդ ցուցակները նոր լույս տեսնող մանկական գրականությամբ։

2. Դպրոցների գիրեկատորները պետք է միջոցներ ձեռք առնեն հանձնարարված գրականությունն ունենալու դպրոցական գրադարաններում։

3. Աշակերտների արտադպրոցական ընթերցանության գործի կազմակերպումն ու ղեկավարումն իրենց վրա ունեաք և վերցնեն հայոց լեզվի դասատուները, այդ գործի մեջ ներդրավելով նաև գրադարանապետներին և դասղեկներին:

4. Հայոց լեզվի դասատուների հիմնական անելքը պետք է լինի՝ հետևել աշակերտների արտադպրոցական ընթերցանության գործին, անհատական հանձնարարություններ տալ առանձին աշխակերտների և սիստեմատիկաբար ստուգել այդ հանձնարարությունների կատարումը:

5. Դասատուներն իրենք պետք է ծանոթ լինեն հանձնարարված զրականությանը և, անհրաժեշտության դեպքում, կազմեն ծանոթագրություններ՝ գրադարանում կախելու համար:

6. Աշակերտներին պետք է տալ ընթերցողի որագրի ձեր, վորով հնարավոր լինի հաշվի առնել կարդացած գրքերը, ընթերցման հաջորդականությունը և աշակերտի կարծիքը կարդացած գրքի մասին:

7. Աշակերտներին պետք է սովորեցնել գրացուցակներից ողտղելու ձեր, խորհուրդներ տալ և կոնկրետ որինակներով ցույց տալ թե ինչպես պետք է կարդալ գեղարվեստական գիրքը, ինչպես քաղվածքներ կատարել և այլն:

8. Դասարանի աշակերտության կողմից կարդացված գրքերը կոլեկտիվ քննարկման յենթարկել՝ գրքի ագիտացիան ուժեղացնելու, վրքի ընթերցումն ավելի սացիոնալ գարճնելու և գրքի խորն ըմբռնմանը նպաստելու համար:

9. Գրադարանի գծով զուգընթաց դասարանների աշակերտների պարբերական խորհրդակցություններ գումարել (ուսուցիչների մասնակցությամբ) և քննարկել ընթերցանության կազմակերպման ու գրադարանի սպասարկման հարցերը, լսել աշակերտների դիտողություններն ու պահանջները՝ գրադարանի աշխատանքներում յեղած բացերը վերացնելու և աշակերտների ուրինական պահանջները բավարարելու համար:

10. Ցանկալի պետք է համարել, վոր 1-ին և 2-րդ դասարանների որինակով 3-րդ և 4-րդ դասարաններում ևս ուսուցիչը տոնվազն 7—10 որը մեկ անգամ գեղարվեստական գրքի կողեղտիվ ընթերցում անցկացնի:

Պետք է ասել, վոր յերեխաններին մեծ հետաքրքրություն և գործնակալություն են պատճառում գեղարվեստական ընթերցանության ժամերը:

## 8. Դասագրեների ոգտագործումը

Սյրենարահնորի և ընթերցանության դասագրքերի ոգտագործման մասին բավարար չափով խոսեցինք զրածանաչության ուսուցման և հողվածի մշակման վերաբերյալ կետերում:

Ինչ վերաբերվում է քերականության դասագրքերի ոգտագործմանը, պետք է ասել, վոր այդ դասագրքերն ընդհանուր առմամբ ողտագործվում են ճիշտ և նպաստակահարմար ձևով: Վորոշ դասատունների մոտ նկատվել են այսպիսի թերություններ: —Դասագրքում արված ստուգողական ընույթի առաջադրությունները, փոխանակ անհրաժեշտ նախապարասատությունից հետո հանձնարարելու, վորպեսզի աշակերտներն ինքնուրույն և անհատորեն կատարեն, դասարանում աշակերտների մասնակցությամբ բանավոր կատարում են, ապա առաջարկում գրել դասարանում կամ տանը: Այսպիսով, ուսուցիչը զրկվում է քերականական անցած գիտելիքների յուրացումն ստուգելու հնարավորությունից:

Թե դասատուններն իրենք և թե աշակերտները մեծ մասամբ սահմանափակվում են դասագրքում յեղած որինակներով և ինքնուրույն որինակներ շատ քիչ են բերում, վորը նյութի խորը յուրացման յերաշխիք չի տալիս (չի յել ապահովում):

Դեռ բավարար չափով վարժություններ չկատարած, լեզվական տվյալ որինաչափությունը աշակերտների կողմից լավ չմրոնված, շուտափույթ յեղբակացությունների յեն հանդում և անդիր սովորեցնում դասագրքում ձևակերպված քերականական կանոնը:

Քերականական կանոններն աշակերտներին թելադրելու վնասակար պրակտիկան, վոր անդամել գործադրվում է բարձր դասարաններում, տարրական դասարաններում տեղի չունի: Այդ յերեւույթը, վորը պետք է նկատել վորպես դասագրքի թերագնահատում, աշակերտներին կտրում է գրքից և ավելորդ սխալների ու անձառությունների տեղիք տալիս:

Վերջում անհրաժեշտ է (հարցադրման կարգով) կանգ առնել յերկու հարցի վրա:

Առաջինն այն է, վոր այստեղ արձարձված խնդիրների մասին շատ և խոսվել ուսուցիչների հետ, սակայն ինչն է պատճառը, վոր նկատված բացերը դասղաղ են վերացվում:

Մեր կարծիքով հիմնական պատճառն այն է, վոր դպրոցում

ուսուցիչների, աշխատանքի ղեկավարումը և հսկողությունը  
նրանց աշխատանքի վրա, շատ թույլ ե:

Դպրոցների ուսմասվարները, վորոնք կոչված են այդ  
պարտավորությունը կատարելու, պլանավորված և հետեւողա-  
կան աշխատանք չեն կատարում այդ ուղղությամբ։ Նրանք, ու-  
սուցիչների նկատմամբ, մեթոդիստների և ղեկավար որգանների  
առաջարկների կատարման ուղղությամբ պահանջնուոտ չեն։ Այդ ե  
պատճառը, վոր շատ հարցեր քննարկվում, պարզաբանվում, առա-  
ջադրվում են, սակայն լրիվ չեն կատարվում, գործը վորոշ  
գորոցներում և վորոշ ուսուցիչների մոտ ելի գնում ե իր նախկին  
ընթացքով։ Պետք ե արմատապես փոխել այս գրությունը, պետք ե  
բարձրացնել ուսուցչի պատասխանատվությունը՝ վոչ թե ընդհա-  
նուր ղեկարատիվ պահանջների, այլ նրանց արված կոնկրետ  
ուաշգրությունների կատարման վրա սիստեմատիկ հսկողու-  
թյուն հւնենալու և թերացման գեղքում, պատասխանատվու-  
թյան յննթարկելու իմաստով։ Յերկրորդ հանգամանք, վոր գըր-  
ված խնդրի կապակցությամբ պետք ե հաշվի առնել, այն ե, վոր  
մեր մանկավարժական ուսումնարաններն ավարտած ընկերները  
մեթոդապես բոլորովին անպատճառ են մտնում մանկավար-  
ժական աշխատանքի ասպարեզ։ Յերբեմն այն տպավորությունն ե  
ստացվում, վոր այդ ընկերները մեթոդիկայի մասին բոլորովին  
գաղտափար չունեն։ Մենք գեռ չենք հանդիպել մանկուսումնարան  
ավարտած մի սկսնակ ուսուցչի, վոր գեթ գրամանաչության  
ուսուցման այժմ մեր դպրոցներում գործադրվող մեթոդի մա-  
սին բավարար հասկացողություն ունենար (ել չենք խոսում  
հմտության մասին)։ Սա անհանդուրժելի յէ։

Պետք ե լուրջ կերպով զբաղվել մեր մանկավարժական ու-  
սումնարաններով և պարզել թե ինչ ե արվում տարրական դաշ-  
սարանների համար մանկավարժական կադրեր տալու պարտա-  
կանությունն ունեցող այդ կարկոր հիմնարկներում։



ԳՐԱԾ 1 Ռ.

70 926

37684

ПОСТАНОВКА ОБУЧЕНИЯ  
АРМЯНСКОГО ЯЗЫКА  
В 1—4 КЛАССАХ МАССОВОЙ ШКОЛЫ  
и  
МЕРОПРИЯТИИ ЕГО УЛУЧШЕНИЯ

Тип. Проспекта, Ереван, Терян № 127

100-8474